

Հ. ԱՔԵՂՅԱՆ, Իսահակյանը և ժողովրդական Էպոսը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 260 էջ

Գեղարվեստական գրականությունը բազում թելերով կապված է ժողովրդական բանահյուսության հետ: Առանց այդ կապի անհնար է պատկերացնել ազգային որևէ գրականություն: Առավել ևս անհնար է պատկերացնել այնպիսի բանաստեղծների ստեղծագործությունները, ինչպիսիք են Թումանյանը և Իսահակյանը:

Հայ գրականագիտությունը վերջին տարիներին բավական ուշադրություն է նվիրում այս հարցին: Բավական հանգամանալից քննության է ենթարկվում հարցի մի մասնակի, բայց չափազանց կարևոր տեսանկյունը, բանաստեղծը և ազգային էպոսը: Մի քանի տարի առաջ տպագրվեց Մ. Զանփուլայանի «Թումանյանը և ժողովրդական էպոսը» գիրքը, իսկ Իսահակյանի հորելյանի առթիվ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Հասմիկ Արեղյանի «Իսահակյանը և ժողովրդական էպոսը» աշխատությունը:

Իսահակյանի «Ասամա Մհերը» Թումանյանի «Աստուների Դավթին» հետ եղավ մեր էպոսի ամենանշանակալից բանաստեղծական մեկնաբանությունը և անմիջապես առանձնացավ էպոսի գրանցումից ի վեր ասպարեզ եկած բազմաթիվ ու բազմազան մշակումներից: Դա պատահական գրված չէր Իսահակյանի ստեղծագործական կենսագրության մեջ: Ինչպես բազմաթիվ փաստերով ցույց է տալիս Հ. Արեղյանը, բանաստեղծն իր ամբողջ կյանքում սենտուն հետաքրքրություն էր ցուցաբերում էպոսի նկատմամբ, տասնամյակներ շարունակ վերամշակում, շտկում էր իր «Ասամա Մհերը»: Ինչպես Թումանյանի «Աստուների Դավթինը» իր մեջ խտացնում էր Թումանյանի բանաստեղծական աշխարհընկալման, նրա սյուսիկալի էական գծերը, այնպես էլ Իսահակյանի պոեմը հստակ ու ցայտուն արտահայտում էր Իսահակյանի ստեղծագործական անհատականության կարևորագույն կողմերը: Անվիճելի է, որ աշխատության մեջ քննարկման առարկա դարձած հարցը իսահակյանագիտության ամենակարևոր խնդիրներից է:

Առաջին գլխում գրականագետը վեր է հանում Իսահակյանի ու ազգային էպոսի (ու միայն հայկական) առնչությունների լայն շրջանակները: Հոգվածներ, ուսումնասիրություններ, տարբեր գլխավորներում ցրված մտքեր, գրառումներ—ահա այն նյութերը, որոնք կազմում են այս գլխի առանցքը: Հ. Արեղյանը օգտագործում է ուսումնասիրողների լայն շրջաններին առաջած անհայտ, չհրատարակված կամ քիչ հայտնի պարբերական մամուլի նյութերը, որը ամբողջ աշխատության կարևոր առավելություններից մեկն է:

Հաջորդ երեք գլուխներում հեղինակը քննում է «Ասամա Մհերին» ստեղծագործական պատմությունը՝ սկսած առաջին տարբերակից մինչև վիպերգի անավարտ նյութերը: Այս թեմային անդրադառնալիս հետադոտողի առաջ անխուսափելիորեն կանգնում է մի շատ կարևոր հարց՝ ինչու՞ Իսահակյանը մշակման համար ընտրեց հենց էպոսի վերջին ճյուղը, ինչու՞ աշխարհից խռոված Մհերը գրավեց նրա ուշադրությունը: Ուրախությամբ պիտի նշել, որ Արեղյանը չի խուսափել այս հարցի պատասխանից: Նա ցույց է տալիս Իսահակյանի պոեզիայում եղած այն մոտիվներն ու տրամադրությունները, որոնք, դեռ վիպերգը գրելուց առաջ, շոշափում էին պոեմի առանցքային հարցերը՝ մարդ-անհատի ըմբոստությունը բռնության դեմ, նրա ազատության ձգտումը, կոիվն ու հուսահատությունը: Ուշագրավ է հեղինակի անցկացրած զուգահեռը՝ «Հեռու ճանապարհի շիրուխը» պատմվածքի հերոսի՝ Օհան ամու և Մհերի միջև: Իսկապես, Իսահակյանի այս երկու հերոսներին շատ բան է մոտեցնում: Երկուսն էլ մտածող, խորհող անհատ են, երկուսն էլ՝ ըմբոստ հոգի, որոնք մենակ պայքարում են աշխարհի անարդարությունների դեմ, երկուսն էլ աշխարհից, մարդկանցից խռոված: Ծիշտ է նկատում գրախոսվող գրքի հեղինակը, որ Օհան ամին ըմբոստության իր պոռթկումից հետո «Մասեա դյուցազնի» պեւ իրեն մենակ է զգում գլուխում (էջ 43, ընդգծումը—Ա. Ե.):

Այս զուգահեռով արդեն Արեղյանը տալիս է վերևում տրված հարցի ճիշտ պատասխանը: Մհերը մոտ էր իսահակյանի հոգուն, որովհետև էպոսի հերոսներից հենց նա էր իր մեջ կրում անձատի ողբերգության սաղմերը, ողբերգություն, որը սնում էր իսահակյանի ողջ ստեղծագործությունը:

Պոեմի երրորդ մշակման մասին խոսելիս հեղինակն այսպիսի դիտողություն է անում. «Ռամկի ազատության պահանջն այստեղ վերաճում է հասարակ մարդ-անհատի բոլոր կապանքներից ազատ լինելու ֆաղափարին» (էջ 132): Սա վերաբերում է «Սասմա Մհերին» ամբողջությամբ, նրա բոլոր տարբերակներին, իսահակյանն ամեն ինչ տեսնում ու զգում է տանջվող անհատի դիրքերից, նրա Մհերն էլ մի տանջվող անհատ է՝ ընդհարված երկրի, մարդկանց, ռամկների հետ, հանուն որոնց նա կռվում է: Ինքը՝ իսահակյանը, Արեղյանի վկայությամբ, այսպես է բնութագրել Մհերի ըմբոստության էությունը. «Կռիվ աստծու դեմ՝ ճակատագրի դեմ, բռնության դեմ՝ ճանուն քացառնակ ազատության, քացառնակ մարդու» (էջ 132):

Մհերի կերպարի այսպիսի մեկնաբանությունը չէր պարփակվում «էպոսի մշակում» հասկացության մեջ, և դա ճիշտ է նկատել Ղ. Արեղյանը: Էպոսի փսկական հերոսը ժողովուրդն է, անհատն ու ժողովուրդը ոչ միայն չեն հակադրվում միմյանց, այլև գոյություն ունեն մեկը մյուսի մեջ, էպոսի հերոս Մհերի մեջ էպիկական շունչը սկսում է մարել, Մհերի կյանքն այլևս այնքան սերտորեն միաձուլված չէ ժողովրդի կյանքին, Բայց նա էպոսում, համենայն դեպս, էպիկական հերոս է ղեռնել: Իսահակյանի մոտ Մհերն արդեն այդպիսին չէ:

Շատ բնութագրական է, որ, ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, իսահակյանի վիպերգում Մհերին անիծողը Դավիթը չէ, այլ բովանդակ Աստունը, ոչ միայն «Երջան», շոշեր, ժամերեցներ, այլև «մեր ու մանուկ, աղքատ, հարուստ»... շարիքներով ծանրաբեռնված աշխարհն է նվազում Մհերին, դիտելով նրան շար և չգիտակցելով նրա բարի ու ճշմարիտ գործը:

Ղ. Արեղյանը գրում է. «...վիպերգը համարձակորեն կարող ենք անվանել էպոսի վերստեղծում և ոչ՝ մշակում» (էջ 50): Գուցե «էպոսի վերստեղծումը» այնքան էլ ստույգ լի արտահայտում երևույթի էությունը, բայց երևույթն ինքը ճիշտ է դիտված: Զարգացնելով այս միտքը, Արեղյանը մեջ է բերում իսահակյանի խոսքերն ալն մասին, որ նա էպոսից վերցրել է միայն մեկ դրվագ, «մնացած բոլորը երևակայություն է, մանավանդ արկածները» (էջ 54): Այսինքն, հենվելով էպոսի նյութի վրա, իսահակյանը գրել է մի բոլորովին նոր ստեղծագործություն, իր քանաստեղծական աշխարհընկալման, փիլիսոփայության դիրքերից մեկնաբանելով էպիկական իրադրություններն ու հերոսին:

Հնարավոր չէ ճիշտ հասկանալ էպոսի նյութի նկատմամբ իսահակյանի մոտեցումը, առանց այն Թումանյանի մշակման հետ համեմատելու: Միմյանց այնքան մոտ երկու մեծ բանաստեղծների էպոսին անդրադառնալը ինքնին թելադրում է նման համեմատություն: Արեղյանը անդրադառնում է նաև այս հարցին, նա միանգամայն ճիշտ է նշում, հենց էպոսի մշակումների առնչությամբ, որ «Թումանյանը և իսահակյանը որքան մեծ, նույնքան և տարբեր ստեղծագործական անհատականություններ են» (էջ 127): Ծիշտ է նկատված նաև, որ «Սասունցի Դավիթ» պոեմում դրսևորված է էպիկ Թումանյանի արվեստը, պատմողի, վիպողի: անգերազանց ձիրքը» (նույն տեղում): Այդ պատճառով էլ Թումանյանը կարիք չունեի այնպիսի արմատական տեղաշարժեր կատարել էպոսի շեշտերում, ինչպես արել է իսահակյանը:

Այս բաժնում Արեղյանը քաղվածքներ է բերում իսահակյանի սեագիր (անտիպ) հոդվածից, որտեղ իսահակյանը համեմատում է իր և Թումանյանի պոեմները: Բերված է մի հատված նաև վերջերս հայտնաբերված իսահակյանի անտիպ նամակից՝ ուղղված Թումանյանին (1902 թ.). երկու փաստաթղթերում էլ իսահակյանը շեշտում է, որ Թումանյանի պոեմը «անհատական ստեղծագործություն» չէ, այլ «նյութի ոտանավոր, մի փոքր մշակված վերածումն է», «սխիսթեզ»: Դարակողմին գրած նամակում նա Թումանյանին հանդիմանում է դրա համար: Սա զարմանալի չէ: Գործ ունենց ստեղծագործական երկու տարբեր մոտեցումների բախման հետ: Երկուսն էլ արդյունավետ եղան մեր պոեզիայի համար, երկուսն էլ ստեղծեցին անմահ գործեր: Կարելի է միայն փոստալ, որ Ղ. Արեղյանը թուուցիկ է անդրադառնում այս համեմատությանը: Այնինչ, շատ շահեկան կլինի երկու պոեմների ավելի հանգամանալից համեմատական քննությունը:

Աշխատանքը չափազանց հարուստ է տեքստաբանական նյութով: Հեղինակը մանրամասն քննում է այն փոփոխությունները, որ տասնամյակների ընթացքում կատարել է իսահակյանը

պոեմի նախնական տեքստում, համեմատում է տարբերակները, բերելով նաև էպոսի այն պատումների նյութերը, որոնցից օգտվել է Իսահակյանը պոեմը վերամշակելիս: Երբեմն, իհարկե, այն տպավորությունն է ստացվում, որ նյութի առատությունը ճնշում է հեղինակին, թույլ չտալով նրան անհրաժեշտ չափով խորացնել կատարված ընդհանրացումները: Բայց, մյուս կողմից, տեքստաբանական նյութի հարստությունը շատ օգտակար կարող է լինել Իսահակյանի ստեղծագործության հետագա ուսումնասիրությունների համար:

Ընդհանուր առմամբ, Հասմիկ Արեղյանի թիսահակյանը և ժողովրդական էպոսը» գիրքը բարձր գնահատականի արժանի ուսումնասիրություն է մեր մեծ բանաստեղծի ստեղծագործության կարևորագույն կողմերից մեկի մասին, որը մինչ այդ հայ գրականության մեջ առանձին հանգամանալից քննության առարկա չէր դարձել:

Գիրքը խմբագրել է բազմազանտակ իսահակյանագետ Արամ Ինճիկյանը, հանգամանք, որը, անկասկած, մեծ չափով նպաստել է աշխատության հաջողության:

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բաճասիրական գիտությունների քեկեածու